[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
20	Նոյեմբեր	2018 թ.		Բ	4022676481
[4] Առաքման ամսաթիվ					
20	Նոյեմբեր	2018 թ.			

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)		

Արտադրանք, ապրանք առաքող անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)		0	6	9	0	2	0	8	7
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)								
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)		0	2	6	3	1	2	6	3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834							
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[18] Լրացուցիչ տվյալներ									
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							
[20] Մատակարարման (առաքման) եղանակը									
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28157418 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

20/11/2018 15:13:45

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 16 » հոկտեմբերի 2018թ. քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ն.Մ. Գարեգինյանս, քննարկելով վարույթիս թիվ 28157418 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:20-ին, ոստիկանության Արթիկի բաժնի ՊՊԾ դասակի հրամանատար Ալեքսանյանը զեկուցագիր է ներկայացրել, որ նույն օրը՝ ժամը 14:00-ի սահմաններում, Արթիկ քաղաքի Բաղրամյան 16 հասցեի դիմաց՝ «Նոյան-Տապան» հանրախանութի մոտ, տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Արթիկ քաղաքի բնակիչներ՝ Հմայակ Նորայրի Իգիթյանը և Արտակ Ֆիրդուսի Իգիթյանը, բռունցքներով հարվածներ են հասցրել Գրիգոր Համլետի Հակոբյանի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս դեմքի շրջանում պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Արթիկ քաղաքի Հակոբյան փողոց տուն 10 հասցեի բնակչուհի՝ Վարդանուշ Խաչիկի Հակոբյանը, հաղորդում և բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Արթիկ քաղաքի «Նոյան-Տապան» հանրախանութի դիմաց Արթիկ քաղաքի բնակիչներ՝ Արտակ և Հմայակ Իգիթյանները, վիճաբանության ժամանակ ծեծի են ենթարկել որդուն՝ Գրիգոր Համլետի Հակոբյանին, ինչի հետևանքով վերջինս ստացել է մարմնական վնասվածքներ: Վերջինս նաև նշել է, որ ինքը դեպքին ականատես չի եղել, կատարվածի մասին իմացել է որդուց՝ Գրիգոր Հակոբյանից, ով տառապում է հոգեկան հիվանդությամբ:

Գրիգոր Համլետի Հակոբյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը կոնկրետ չի նշել, ինքը կոֆե աղալու կրպակի մոտ տեսել է Արտակ Իգիթյանին, հայհոյել նրան և աղբը աղբարկղից վերցնելով շպրտել վերջինիս ուղղությամբ: Դրանից հետո իր և Արտակ Իգիթյանի միջև վիճաբանություն է տեղի ունեցել, որի ընթացքում Արտակ Իգիթյանը ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել մարմնի տարբեր մասերին: Այդ ընթացքում Արտակ Իգիթյանի հետի տղան, ում չի ճանաչում, փորձել է վիճաբանությունը հանդարտեցնել: Նաև նշել է, որ վիճաբանության ընթացքում ինքը ոչ ոքի չի հարվածել:

Հմայակ Նորայրի Իգիթյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ինքը ազգականի՝ Արտակ Իգիթյանի, հետ գտնվել է իր վաճառակետում, երբ վաճառակետին է մոտեցել Գրիգոր Հակոբյանը և անհիմն պատճառով հայհոյանքներ կատարել Արտակ Իգիթյանի հասցեին և հեռացել: Սակայն մի քանի րոպե անց Գրիգոր Հակոբյանը նորից մոտեցել է վաճառակետին հայհոյանք կատարել և աղբարկղից վերցնելով աղբը շպրտել կրպակի մեջ, որից հետո Արտակ Իգիթյանի և Գրիգոր Հակոբյանի միջև վիճաբանություն է տեղի ունեցել, որի ընթացքում Արտակ Իգիթյանը մի քանի անգամ բռունցքներով հարվածներ է հասցրել Գրիգոր Հակոբյանի մարմնի տարբեր մասերին, իսկ ինքը փորձել է վիճաբանությունը հանդարտեցնել: Նաև նշել է, որ ինքը Գրիգոր Հակոբյանին չի հարվածել:

Հմայակ Նորայրի Իգիթյանի բացատրության բովանդակությանը համապատասխանող բացատրություն է տվել նաև Արտակ Ֆիրդուսի Իգիթյանը և նշել, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, իր և Գրիգոր Հակոբյանի միջև տեղի ունեցած վիճաբանության ժամանակ վերջինս իրեն ձեռքով մեկ անգամ հարվածել է և պատճառել ֆիզիկական ցավ:

Ամբիոզ Աշոտի Ալեքսանյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, «Նոյան-Տապան» հանրախանութի մոտ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ ինքը տեսել է, թե ինչպես են Արտակ և Հմայակ Իգիթյանները ձեռքերով հարվածներ հասցնում Գրիգոր Հակոբյանի մարմնի տարբեր մասերին:

Նորայր Արմենի Ավետիսյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, «Նոյան-Տապան» հանրախանութի դիմաց տեղի ունեցած վիճաբանության ժամանակ ինքը տեսել է, թե ինչպես է Արտակ Իգիթյանը ձեռքերով հարվածում Գրիգոր Հակոբյանին, իսկ Հմայակ Իգիթյանը ըստ երևույթի փորձում էր նրանց բաժանել:

Մարինե Աշոտի Բաղդասարյանը բացատրություն է տվել, որ ինքը չի նկատել, թե վիճաբանության ընթացքում ով ում է հարվածել:

Ոստիկանության Արթիկի բաժնի կողմից ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ 2018 թվականի սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Արթիկ քաղաքի «Նոյան-Տապան» հանրախանութի մոտ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Արտակ և Հմայակ Իգիթյանները ծեծի են ենթարկել Գրիգոր Հակոբյանին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0366/Հ եզրակացության, Գրիգոր Համլետի Հակոբյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ ստորակնակապճային և քթի մեջքի շրջանների քերծվածքների ձևով հասցվել են բութ առարկաներով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում, հանգամանքներում, առնվազն երկու ներգործության հետևանք են և առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1157 եզրակացության, Հմայակ Իգիթյանի մարմնի վրա ներկա փորձաքննությամբ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1158 եզրակացության, Արտակ Իգիթյանի մոտ փորձաքննության պահին մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Կատարված ստուգումներով պարզվել է, որ Գրիգոր Համլետի Հակոբյանը 1999 թվականից անցնում է «Արթիկ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության նարկոլոգիական և հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն, վարքագծի խանգարումներով ախտորոշմամբ:

«Արթիկ Բ/Կ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ ԲԿ 765639 ուղեգրի և Վարդանուշ Խաչիկի Հակոբյանի դիմումի համաձայն Գրիգոր Հակոբյանը 03.09.2018թ. տեղափոխվել է ստացիոնար բուժօգնության Գյումրու ՀԱԿ:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ

28157418 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին:

Ստուգումամբ պարզվել է, որ Գրիգոր Համլետի Հակոբյանը 1999 թվականից անցնում է ,,Արթիկ բժշկական կենտրոն,, ՓԲ ընկերության հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ ,,չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն, վարքագծի խանգարումներով,, ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 28157418 քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Դեպքի վերաբերյալ բացատրություն, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Գրիգոր Համլետի Հակոբյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո՝ ապա ինչ հիվանդությամբ:

բ/ Դեպքի վերաբերյալ բացատրություն, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Գրիգոր Համլետի Հակոբյանի մոտ առկա են ժամանակավոր հիվանդագին երևույթներ, հոգեկան գործունեության խանգարումներ, եթե այո՝ ապա ինչպիսիք:

գ/ Գրիգոր Համլետի Հակոբյանի մոտ առկա են արդյոք հոգեկան պակասություններ, որի հետևանքով նա ի վիճակի չէ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

դ/ Գրիգոր Համլետի Հակոբյանը կարող է գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

ե/ Գրիգոր Համլետի Հակոբյանը դեպքի ժամանակ կարող էր ադեկվատ ձևով ըմբռնել և վերարտադրել իրականությունը և գործի համար կարևոր հանգամանքների մասին տալ ճիշտ ցուցմունքներ:

Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

Քննիչ՝ **Ն.Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ**